**Արձանագրություն N 2-2**

**ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-26/3 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Ներքին Բազմաբերդ բնակավայրի դպրոցի նորոգման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

08.05.2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Գասպարյան
Անդամներ՝ Ս. Իշխանյան
Ա. Աչոյան
Ա. Խաչատրյան
Ա. Եղիազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանուչարյան

**1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտի ուսումնասիրության մասին**

---

(Ս. Գասպարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ պաշտպանության նախարարությունից գրություն չի ստացվել, իսկ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից, ՀՀ առողջապահության նախարարությունից, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից, ՀՀ քաղաքաշինության կոմիտեից, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից, Երևանի քաղաքապետարանից ստացված գրությունների և «Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի համաձայն գնման ընթացակարգի մասնակից «Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ-ի հայտը համապատասխանում է ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-26/3 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5 դեմ-0:*

**2. Տվյալներ ընտրված մասնակցի վերաբերյալ**

---

(Ս. Գասպարյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի գնահատման թերթիկները՝ «Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

2.2 ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ-0:*

**3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ**

---

(Ս. Գասպարյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված մասնակից «Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5 դեմ-0:*

**4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

---

(Ս. Գասպարյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5 դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Ս. Գասպարյան

Անդամներ՝ ---------------------------------------- Ս. Իշխանյան

---------------------------------------- Ա. Աչոյան

---------------------------------------- Ա. Խաչատրյան

---------------------------------------- Ա. Եղիազարյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Ա. Մանուչարյան